

## ԱՅՑ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Ի կատարումն ՀՀ «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքի 8-րդ հոդվածի և 28.02.2013թ. «Հանրային գրադարանների հավատարմագրման կարգը և վկայականի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման, 2018թ. Հանրային գրադարանի կարգավիճակ են ստացել նաև չորս համայնքային գրադարաններ: Վարդենիսի համայնքային մանկական գրադարան և Մարտունու համայնքային գրադարան այցելություններից հետո նախատեսվող աշխատանքները տեղում կազմակերպելու և իրավիճակը գնահատելու նպատակով հոկտեմբերի 10-ին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակազմը այցելեց Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային գրադարան և Լոռու մարզի Վանաձորի Մկրտիչ Սարգսյանի անվան քաղաքային մանկական գրադարան: Ախուրյանի գրադարանում հանդիպում տեղի ունեցավ նաև համայնքի ղեկավար Արծրուն Իգիթյանի հետ, ով մշտապես աջակցել է գրադարանին: Նա խոստացավ գրադարանում մինչ ծրագրի իրականացումը կազմակերպել բարեկարգման աշխատանքներ:

Հավատարմագրված գրադարանները պետության աջակցությամբ նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրի շրջանակներում կստանան գրադարանային գույք և համակարգչային տեխնիկա, կհամալրվեն նոր գրականությամբ:

